

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ԿԱՐԻՔՆԵՐԻ «ՍՈՒՐԱՑԱՆ» ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՅԻ ԿՈՂՄԻՑ  
ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՑՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՑԱՆԿՈՎ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-2021/14-ԵՊԲՀ-2**

ք. Երևան

«\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

«Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա. Մուրադյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էսկուլապ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Գ. Գրիգորյանի, որը գործում է «Էսկուլապ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Հերացի» թիվ 1 և «Մուրացան» հիվանդանոցային համալիրի պոլիկլինիկաների կողմից քաղաքացիներին անվճար դեղորայքի ապահովման պարտադիր ցանկով դեղատնային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պոնակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է մինչև 6000000(վեց միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:<sup>19</sup>

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

<sup>19</sup>Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ  
<<Երևանի Մխիթար Հերացու անվան  
պետական բժշկական համալսարան>>  
Հիմնադրամ  
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2  
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ  
h/h 11500166513800  
ՀՎՀՀ 01503448  
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

---

(ստորագրությունը)  
Կ.Տ

<<ՎԱՃԱՌՈՂ>>  
<<Էսկուլայ>> ՍՊԸ  
Հասցե՝ ք. Երևան, Դավիթբաշեն 1-ին թաղ.  
17/2  
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ  
h/h2050022016761100  
ՀՎՀՀ 01215786  
Տնօրեն՝ Գ. Գրիգորյան

Digitally signed by GRIGORYAN GAGIK 1711560103  
Date: 2020.12.25 17:25:38 AMT

---

(ստորագրությունը)  
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող  
դրույթներ:*

Digitally signed by MURADYAN ARMEN  
2007720078  
Date: 2020.12.29 13:08:03 AMT

**ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆԱԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

| Չափա-<br>բաժնի<br>համարը | Գնման առարկայի<br>Անվանումը և տեխնիկական բնութագիրը  | Չափման<br>միավորը | Առևտրային<br>անվանում                         | Ընդանուր գին<br>ԱԱՀ ներառյալ |
|--------------------------|--|-------------------|---|------------------------------|
| 1                        | 2  | 3                 | 4   | 5                            |
| 2                        | <i>«Մուրացան» պոլիկլինիկայի կողմից քաղաքացիներին անվճար դեղորայքի ապահովման պարտադիր ցանկով դեղատեսակների ծառայություն</i>                 |                   |   |                              |
| 2,1                      | Ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ ԻԼԹ) insulin human isophane (recombinant DNA) դեղակախույթ ներարկման 100ՄՄ/մլ, 3մլ փամփուշտ, տրամադրում | փամփուշտ          | Լանտուս 100ՄՄ/մլ 3մլ N5                       | 9780                         |
| 2,2                      | Ազիթրոմիցին azithromycin դեղապատիճ 250մգ, տրամադրում   | դեղապատիճ         | Ազիտրոքս դյաճ 250մգ N6                        | 564                          |
| 2,3                      | Ազիթրոմիցին azithromycin դեղահատ թաղանթապատ 500մգ, տրամադրում  | դեղահատ           | Ազիտրոմ-Ռեպլեկ դիտ թ/պ 500մգ N3               | 660                          |
| 2,4                      | Ազիթրոմիցին դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 200մգ/5մլ, տրամադրում   | հատ               | Ազիտրոքս սուսպ. 200մգ/5մլ 20մլ                | 3129.6                       |
| 2,5                      | Ազիթրոմիցին azithromycin դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 100մգ/5մլ, 20մլ, տրամադրում  | հատ               | Ազիտրոքս սուսպ. 100մգ/5մլ 20մլ                | 1820.4                       |
| 2,6                      | Ալբենդազոլ albendazole դեղահատ ծամելու 400մգ, տրամադրում   | դեղահատ           | Ալբենդազոլ ծամ. դիտ 400մգ N4 (Արփիմեդ)        | 225.6                        |
| 2,7                      | Ալյումինիումի հիդրօքսիդ, մագնեզիումի հիդրօքսիդ Aluminium Hydroxide, Magnesium Hydroxide դեղահատ ծամելու 400մգ+400մգ, տրամադրում            | դեղահատ           | Մապրոքս ծամ. դիտ 400մգ/400մգ N40              | 57.6                         |
| 2,8                      | Ալոպուրինոլ, Allopurinol դեղահատ 100 մգ, տրամադրում  | դեղահատ           | Ալոպուրինոլ դիտ 100մգ N30                     | 26.4                         |
| 2,9                      | Ածուխ ակտիվացված, charcoal activated դեղահատ 250մգ, տրամադրում   | դեղահատ           | Ածուխ ակտիվ դիտ 250մգ N10                     | 6                            |
| 2,10                     | Ամիկացին amikacin, լուծույթ ներարկման, 500մգ/2մլ, տրամադրում   | ամպուլա           | Ամիկատոն ամպ. 500մգ/2մլ N10                   | 2760                         |
| 2,11                     | Ամինոկապրոնաթթու Aminocaproic acid լուծույթ ներարկման 50մգ/մլ, 100մլ, փաթեթ, տրամադրում  | փաթեթ             | Ամինոկապրոնաթթու 1-թ 5% 100մլ (Ֆարմատեք)      | 579.6                        |
| 2,12                     | Ամինոկապրոնաթթու Aminocaproic acid լուծույթ ներարկման 50մգ/մլ, 250մլ, փաթեթ, տրամադրում  | փաթեթ             | Ամինոկապրոնաթթու 1-թ 5% 250մլ (Ֆարմատեք)      | 1050                         |
| 2,13                     | Ամինոֆիլին, Aminophylline դեղահատ 150մգ, տրամադրում  | դեղահատ           | Էուֆիլլին դիտ 150մգ N30 (Բել.)                | 7.2                          |
| 2,14                     | Ամինոֆիլին, Aminophylline լուծույթ ներարկման 24մգ/մլ, 5մլ ամպուլա, տրամադրում  | ամպուլա           | Էուֆիլլին ամպ. 2,4% 5մլ N10 (ԵՔԴՖ)            | 49.992                       |
| 2,15                     | Ամիոդարոն amiodarone դեղահատ 200մգ, տրամադրում   | դեղահատ           | Կորդարոն դիտ 200մգ N30                        | 141.6                        |
| 2,16                     | Ամիոդարոն amiodarone լուծույթ ներարկման 50 մգ/մլ, 3մլ ամպուլա, տրամադրում  | ամպուլա           | Կորդարոն ամպ. 150մգ/3մլ N6                    | 928.8                        |
| 2,17                     | Ամիտրիպտիլին amitriptyline դեղահատ թաղանթապատ 25մգ, տրամադրում   | դեղահատ           | Ամիտրիպտիլին դիտ 25մգ N48(Արփիմեդ)            | 15                           |
| 2,18                     | Ամլոդիպին amlodipine դեղահատ թաղանթապատ 5մգ, տրամադրում  | դեղահատ           | Ամլոդիպին դիտ 5մգ N20                         | 22.8                         |
| 2,19                     | Ամպիցիլին ampicillin դեղափոշի ներարկման լուծույթի 500մգ սրվակ, տրամադրում  | սրվակ             | Ամպիցիլին փոշի սրվ. 0,5գ N1(Ռուկր)            | 150                          |
| 2,20                     | Ամպիցիլին ampicillin դեղափոշի ներարկման լուծույթի 1000մգ սրվակ, տրամադրում   | սրվակ             | Ամպիցիլին փոշի սրվ. 1գ N1(Ռուկր)              | 210                          |
| 2,21                     | Ամօքսիցիլին amoxicillin դեղապատիճ 250մգ, տրամադրում  | դեղապատիճ         | Ամօքսիցիլին դյաճ 250մգ N10 (Գերմ-Տրոմ)        | 37.2                         |
| 2,22                     | Ամօքսիցիլին amoxicillin դեղապատիճ 500մգ, տրամադրում  | դեղապատիճ         | Ամօքսիցիլին դյաճ 500մգ N10 (Գերմ-Տրոմ)        | 50.4                         |
| 2,23                     | Ամօքսիցիլին amoxicillin 125մգ/5մլ դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի, 60մլ սրվակ, տրամադրում   | սրվակ             | Օսպամոքս սուսպ. 125մգ/5մլ 60մլ                | 1650                         |
| 2,24                     | Ամօքսիցիլին amoxicillin դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի, 250մգ/5մլ, 100մլ, տրամադրում   | հատ               | Ամօքսիցիլին օջառակ 250մգ/5մլ 100մլ (Հեմոֆարմ) | 1236                         |
| 2,25                     | Ամօքսիցիլին, քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid դեղահատ տարրալուծվող 500մգ+125մգ, տրամադրում                                      | դեղահատ           | Ֆլեմոկլավ Մոդուտաբ դիտ                        | 211.2                        |

|      |  |         |  |         |
|------|--|---------|--|---------|
|      |  |         | 500մգ+ 125մգ N20                           |         |
| 2,26 | Ամօքսիցիլին, քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid դեղափոշի ներքին ընդունման դեղակախոյթի 125մգ/5մլ+31,25մգ/5մլ, 100մլ, տրամադրում        | հատ     | Ամօքսիլկլավ սուսպ. 156.25մգ/5մլ 100մլ      | 1308    |
| 2,27 | Ամօքսիցիլին, քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid դեղափոշի ներքին ընդունման դեղակախոյթի 250մգ/5մլ+ 62,5մգ/5մլ, 100մլ, տրամադրում        | հատ     | Ամօքսիլկլավ ֆորտե սուսպ. 312.5մգ/5մլ 100մլ | 3660    |
| 2,28 | Անաստրոզոլ Anastrozol դեղահատ թաղանթապատ 1 մգ, տրամադրում  | դեղահատ | Անաստրոզոլ թ/պ դիտ 1մգ N28 (Ակկորդ)        | 462     |
| 2,29 | Ատենոլոլ, atenolol դեղահատ թաղանթապատ 100 մգ, տրամադրում   | դեղահատ | Ատենոլոլ դիտ 100մգ N28 (Ակկորդ)            | 49.872  |
| 2,30 | Ատենոլոլ, atenolol դեղահատ թաղանթապատ 50 մգ, տրամադրում  | դեղահատ | Ատենոլոլ դիտ 50մգ N30 (Բեկ)                | 5.28    |
| 2,31 | Ատորվաստատին atorvastatin դեղահատ թաղանթապատ 10մգ, տրամադրում  | դեղահատ | Ատորվաստատին դիտ թ/պ 10մգ N30              | 48      |
| 2,32 | Ատորվաստատին atorvastatin դեղահատ թաղանթապատ 20մգ, տրամադրում  | դեղահատ | Ատորվաստատին դիտ թ/պ 20մգ N30              | 75      |
| 2,33 | Ատորվաստատին atorvastatin դեղահատ թաղանթապատ 40մգ, տրամադրում  | դեղահատ | Ատորվաստատին դիտ թ/պ 40մգ N30              | 91.2    |
| 2,34 | Ատրոպին (ատրոպինի սուլֆատ) atropine (atropine sulfate) լուծույթ ներարկման 1մգ/մլ, 1մլ ամպուլա, տրամադրում                                      | ամպուլա | Ատրոպին ս/տ ամպ. 0.1% 1մլ N10              | 84      |
| 2,35 | Ատրոպին (ատրոպինի սուլֆատ) atropine (atropine sulfate) ակնակաթիլ 10մգ/մլ, 5մլ , տրամադրում   | հատ     | Ատրոպին ս/տ աչքի կաթիլ 1% 5մլ N1           | 540     |
| 2,36 | Արծաթի սուլֆադիազին silver sulfadiazine քսուր արտաքին կիրառման 10մգ/գ, 50գ պարկուճ , տրամադրում  | պարկուճ | Դերմազին նրբաքսուր 1% 50գ                  | 2961    |
| 2,37 | Ացետազոլամիդ, acetazolamide դեղահատ 250մգ, տրամադրում  | դեղահատ | Դիակաթր դիտ 250մգ N30                      | 105     |
| 2,38 | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid դեղահատ թաղանթապատ, աղելույծ 100մգ, տրամադրում  | դեղահատ | Ասպիրին Գարդիոլ դիտ 100մգ N28              | 60      |
| 2,39 | Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid դեղահատ 500մգ, տրամադրում   | դեղահատ | Ասպիրին դիտ 500մգ N10 (Ֆարմ Ստանդարտ)      | 8.4     |
| 2,40 | Ացետիլցիստեին, Acetylcysteine լուծույթ մ/մ և ն/ե ներարկման և շնչառման 100մգ/մլ, 3մլ ամպուլա, տրամադրում  | ամպուլա | Ֆլուիմուցիլ 100մգ/մլ, 3մլ ամպ. N5          | 660     |
| 2,41 | Ացետիլցիստեին Acetylcysteine գրանուլներ ներքին ընդունման լուծույթի, 100մգ փաթեթիկ, տրամադրում  | փաթեթիկ | ԱՅՑ թշշ. փաթ. 100մգ N20                    | 132     |
| 2,42 | Ացետիլցիստեին Acetylcysteine գրանուլներ ներքին ընդունման լուծույթի, 200մգ փաթեթիկ, տրամադրում  | փաթեթիկ | ԱՅՑ թշշ. փաթ. 200մգ N20                    | 84      |
| 2,43 | Ացիկլովիր, acyclovir դեղափոշի կաթիլաներարկման լուծույթ 250մգ սրվակ, տրամադրում   | սրվակ   | Վիրոլեքս 250մգ սրվ. N5                     | 4080    |
| 2,44 | Ացիկլովիր, acyclovir դեղահատ 200մգ, տրամադրում   | դեղահատ | Ացիկլովիր-Ակրի դիտ 200մգ N20               | 30      |
| 2,45 | Բենզիլ բենզոատ, Benzyl Benzoate 200մգ/մլ, 100մլ կիթ (Էմուլսիա), տրամադրում   | հատ     | Բենզիլբենզոատ սուսպ. 20% 100մլ (Էսկո-ֆարմ) | 336     |
| 2,46 | Բենզիլպենիցիլին (բենզիլպենիցիլին նատրիում) benzylpenicillin (benzylpenicillin sodium) դեղափոշի ներարկման լուծույթի 1000000ՄՄ սրվակ, տրամադրում | սրվակ   | Բենզիլպենիցիլին սրվ. 1գ /Սինթեզ/           | 120     |
| 2,47 | Բենզոիլ պերօքսիդ, Benzoyl peroxide դոնոր արտաքին կիրառման 50մգ/գ, 25գ պարկուճ , տրամադրում   | պարկուճ | Վիտասիլ դոնոր 5% 25մլ                      | 2880    |
| 2,48 | Բետամեթազոն betamethasone քսուր 1մգ/գ, 15գ պարկուճ , տրամադրում  | պարկուճ | Բետամեթազոն քսուր 0.1% 15գ /Արփիմեդ/       | 1176    |
| 2,49 | Բետամեթազոն betamethasone նրբաքսուր 1մգ/գ, 15գ պարկուճ , տրամադրում  | պարկուճ | Բետամեթազոն նրբաքսուր 0.1% 15գ /Արփիմեդ/   | 1308    |
| 2,50 | Բիսոպրոլոլ bisoprolol դեղահատ թաղանթապատ 2.5մգ, տրամադրում   | դեղահատ | Բիսոպրոլոլ դիտ թ/պ 2.5մգ N30 (Ռեպլեկ)      | 19.2    |
| 2,51 | Բիսոպրոլոլ bisoprolol դեղահատ թաղանթապատ 5մգ, տրամադրում   | դեղահատ | Բիսոպրոլոլ դիտ թ/պ 5մգ N30 (Ռեպլեկ)        | 27.9996 |
| 2,52 | Բիսոպրոլոլ bisoprolol դեղահատ թաղանթապատ 10մգ, տրամադրում  | դեղահատ | Բիսոպրոլոլ դիտ թ/պ 10մգ N30 (Ռեպլեկ)       | 39      |
| 2,53 | Բուպիվակային (բուպիվակայինի հիդրոքլորիդ) bupivacaine (bupivacaine hydrochloride), լուծույթ ներարկման, 5մգ/մլ, 4մլ ամպուլա, տրամադրում          | ամպուլա | Բուպիվակային ամպ. 0.5% 4մլ N5              | 1500    |
| 2,54 | Բուպիվակային (բուպիվակայինի հիդրոքլորիդ) bupivacaine (bupivacaine hydrochloride), լուծույթ ներարկման, 5մգ/մլ, 10մլ ամպուլա, տրամադրում         | ամպուլա | Բուպիվակային ամպ. 0.5% 10մլ N10            | 1080    |
| 2,55 | Գենտամիցին gentamicin լուծույթ ներարկման 40մգ/մլ, 2մլ ամպուլա, տրամադրում  | ամպուլա | Գենտամիցին սուլֆատ ամպ. 4% 2մլ N10/Ռուկր/  | 96      |

|      |   |           |  |         |
|------|---|-----------|--|---------|
| 2,56 | Գլիբենկլամիդ, glibenclamide դեղահատ 5 մգ , տրամադրում   | դեղահատ   | Գլիբենկլամիդ դիտ 5մգ N50(Ուկրաինա)           | 10.5    |
| 2,57 | Նիտրոգլիցերին (nitroglycerine) դեղահատ ենթալեզվային 0.5 մգ, տրամադրում  | դեղահատ   | Նիտրոգլիցերին դիտ 0.5մգ N40(Ուկր)            | 10.9992 |
| 2,58 | Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 50մգ/մլ, 100մլ փաթեթ, տրամադրում                                   | փաթեթ     | Գլյուկոզա 1-թ 5% 100մլ (Ֆարմատեթ)            | 348     |
| 2,59 | Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 50մգ/մլ, 200մլ փաթեթ, տրամադրում                                   | փաթեթ     | Գլյուկոզա 1-թ 5% 200մլ (Ֆարմատեթ)            | 360     |
| 2,60 | Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 50մգ/մլ, 250մլ փաթեթ, տրամադրում                                   | փաթեթ     | Գլյուկոզա 1-թ 5% 250մլ (Ֆարմատեթ)            | 360     |
| 2,61 | Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 50մգ/մլ, 500մլ փաթեթ, տրամադրում                                   | փաթեթ     | Գլյուկոզա 1-թ 5% 500մլ (Ֆարմատեթ)            | 366     |
| 2,62 | Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 50մգ/մլ, 1000մլ փաթեթ, տրամադրում                                  | փաթեթ     | Գլյուկոզա 1-թ 5% 1000մլ (Ֆարմատեթ)           | 474     |
| 2,63 | Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 100մգ/մլ, 100մլ փաթեթ, տրամադրում                                  | փաթեթ     | Գլյուկոզա 1-թ 10% 100մլ                      | 444     |
| 2,64 | Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 100մգ/մլ, 200մլ փաթեթ, տրամադրում                                  | փաթեթ     | Գլյուկոզա 1-թ 10% 200մլ (Ֆարմատեթ)           | 468     |
| 2,65 | Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 100մգ/մլ, 500մլ փաթեթ, տրամադրում                                  | փաթեթ     | Գլյուկոզա 1-թ 10% 500մլ (Ֆարմատեթ)           | 540     |
| 2,66 | Դոքսիցիլին doxycycline դեղապատիճ 100մգ, տրամադրում  | դեղապատիճ | Դոկսիցիլին հ/ք դպճ 100մգ N10 (Բեւ.)          | 25.2    |
| 2,67 | Դեքսամեթազոն dexamethasone ակնակաթիլներ 1մգ/մլ, 5մլ սրվակ, տրամադրում   | սրվակ     | Օֆտան Դեքսամետազոն աչքի կաթիլ 0,1% 5 մլ      | 1869.6  |
| 2,68 | Դեքսամեթազոն dexamethasone ակնակաթիլներ 1մգ/մլ, 10մլ սրվակ, տրամադրում  | սրվակ     | Դեքսամետազոն աչքի կաթիլ 0.1% 10մլ (Ռոմֆինիա) | 780     |
| 2,69 | Դեքսամեթազոն dexamethasone լուծույթ ներարկման 4մգ/մլ, 1մլ ամպուլա, տրամադրում   | ամպուլա   | Դեքսամետազոն ամպ. 4մգ/1մլ N25                | 108     |
| 2,70 | Դիազեպամ diazepam դեղահատ թաղանթապատ 5մգ, տրամադրում  | դեղահատ   | Դիազեպամ ամպ. 10մգ/2մլ N10                   | 10.8    |
| 2,71 | Դիազեպամ diazepam դեղահատ 10մգ, տրամադրում  | դեղահատ   | Դիազեպամ դիտ 10մգ N24                        | 14.4    |
| 2,72 | Դիազեպամ diazepam լուծույթ ներարկման 5մգ/մլ, 2մլ ամպուլա, տրամադրում  | ամպուլա   | Դիազեպամ ամպ. 10մգ/2մլ N10                   | 108     |
| 2,73 | Դիգոքսին digoxin դեղահատ 0,25մգ, տրամադրում   | դեղահատ   | Դիգոքսին դիտ 0.25մգ N50(Ուկր)                | 7.992   |
| 2,74 | Դիգոքսին, Digoxin լուծույթ ներարկման 0,25մգ/մլ, 1մլ ամպուլա, տրամադրում   | ամպուլա   | Դիգոքսին ամպ. 0.25մգ/մլ 1մլ N10(Ուկր)        | 105     |
| 2,75 | Դիդրոգեստերոն Dydrogesterone դեղահատ թաղանթապատ 10 մգ, տրամադրում   | դեղահատ   | Դյուֆաստոն դիտ 10մգ N20                      | 312     |
| 2,76 | Դիկլոֆենակ diclofenac դոնդող արտաքին կիրառման 10մգ/գ, 50գ պարկուճ , տրամադրում  | պարկուճ   | Դիկլոֆենակ դոնդող 1% 50գ (Ուկր)              | 528     |
| 2,77 | Դիկլոֆենակ diclofenac դոնդող արտաքին կիրառման 50մգ/գ, 50գ պարկուճ, տրամադրում   | պարկուճ   | Դիկլակ դոնդող 5% 50գ                         | 2100    |
| 2,78 | Դիկլոֆենակ diclofenac դեղահատ 100մգ, տրամադրում   | դեղահատ   | Դիկլոֆենակ դիտ 100մգ ռետարդ N10(Ռեմետան)     | 42      |
| 2,79 | Դիկլոֆենակ diclofenac դեղահատ 75մգ, տրամադրում  | դեղահատ   | Դիկլակ ID դիտ 75մգ N20                       | 102     |
| 2,80 | Դիկլոֆենակ diclofenac դեղահատ 50մգ, տրամադրում  | դեղահատ   | Դիկլոֆենակ դիտ 50մգ N20 (Հեմ)                | 24      |
| 2,81 | Դիկլոֆենակ diclofenac լուծույթ ներարկման 25 մգ/մլ, 3մլ ամպուլա, տրամադրում  | ամպուլա   | Դիկլոֆենակ ամպ. 75մգ/3մլ N5(Հեմ)             | 126     |
| 2,82 | Դիֆենհիդրամին diphenhydramine դեղահատ 50մգ, տրամադրում  | դեղահատ   | Դիմեդրոլ դիտ 50մգ N10/Բեդոնուս               | 10.5    |
| 2,83 | Դիֆենհիդրամին diphenhydramine լուծույթ ներարկման 10մգ/մլ, 1մլ ամպուլա, տրամադրում   | ամպուլա   | Դիմեդրոլ ամպ. 1% 1մլ N10 (ԵՔԴՖ)              | 33      |
| 2,84 | Դրոտավերին drotaverine դեղահատ 40մգ, տրամադրում   | դեղահատ   | Նո-շպա դիտ 40մգ N100                         | 28.8    |
| 2,85 | Դրոտավերին drotaverine լուծույթ ներարկման 20մգ/մլ, 2մլ ամպուլա, տրամադրում  | ամպուլա   | Նո-շպա ամպ. 40մգ/2մլ N25                     | 210     |
| 2,86 | Դոպամին dopamine խտանյութ կաթիլաներարկման 40մգ/մլ, 5մլ ամպուլա, տրամադրում  | ամպուլա   | Դոպամին -տեո 40մգ/մլ, 5մլN10                 | 960     |
| 2,87 | Երկաթի (III) հիդրօքսիդի և պոլիմալտոզի համալիր iron (III) hydroxide with poly maltose complex դեղահատ ծամելու 100մգ , տրամադրում | դեղահատ   | Ֆերրոուս I.եկ դիտ 100մգ N30                  | 99.9996 |

|       |   |                    |  |        |
|-------|---|--------------------|--|--------|
| 2,88  | Երկաթի (III) հիդրօքսիդի և պոլիմալտոզի համալիր iron (III) hydroxide with poly maltose լուծույթ ներքին ընդունման 10մգ/մլ, 100մլ, տրամադրում | հատ                | Ֆերրում Լեկ օշարակ 50մգ/5մլ 100մլ        | 1602   |
| 2,89  | Երկաթ (III)-հիդրօքսիդի դեքստրանային համալիր iron (III)-hydroxide dextran complex լուծույթ ներարկման 50մգ/մլ, 2մլ ամպուլա, տրամադրում      | ամպուլա            | Ֆերրում Լեկ ամպ. 100մգ/2մլ N10           | 1032   |
| 2,90  | Էթանոլ ethanol լուծույթ 96% 50մլ 22իկ, տրամադրում   | 22իկ               | Սպիրտ բժշկական 96% 50մլ (Լիգին)          | 192    |
| 2,91  | Էթանոլ ethanol լուծույթ 96% 100մլ 22իկ, տրամադրում  | 22իկ               | Սպիրտ բժշկական 96% 100մլ (Լիգին)         | 300    |
| 2,92  | Էթանոլ ethanol լուծույթ 96% 250մլ 22իկ, տրամադրում  | 22իկ               | Սպիրտ բժշկական 96% 250մլ (Լիգին)         | 492    |
| 2,93  | Էթանոլ ethanol լուծույթ 96% 500մլ 22իկ, տրամադրում  | 22իկ               | Սպիրտ բժշկական 96% 500մլ (Լիգին)         | 855    |
| 2,94  | Էթանոլ ethanol լուծույթ 96% 1000մլ 22իկ, տրամադրում   | 22իկ               | Սպիրտ բժշկական 96% 1լ (Լիգին)            | 1596   |
| 2,95  | Էթանոլ ethanol լուծույթ 70% 50մլ 22իկ, տրամադրում   | 22իկ               | Սպիրտ բժշկական 70% 50մլ (Լիգին)          | 180    |
| 2,96  | Էթանոլ ethanol լուծույթ 70% 100մլ 22իկ, տրամադրում  | 22իկ               | Սպիրտ բժշկական 70% 100մլ (Լիգին)         | 288    |
| 2,97  | Էթանոլ ethanol լուծույթ 70% 250մլ 22իկ, տրամադրում  | 22իկ               | Սպիրտ բժշկական 70% 250մլ (Լիգին)         | 480    |
| 2,98  | Էթինիլէստրադիոլ + լեոնորգեստրել Ethinylestradiol + Levonorgestrel դեղահատ թաղանթապատ 30մկգ+150մկգ, տրամադրում                             | դեղահատ            | Ռիգևիդոն դիտ թ/պ 3 x 21                  | 123.6  |
| 2,99  | Էնալապրիլ enalapril դեղահատ 2.5 մգ, տրամադրում  | դեղահատ            | Էնապ դիտ 2.5մգ N20                       | 39     |
| 2,100 | Էնալապրիլ enalapril դեղահատ 5 մգ, տրամադրում  | դեղահատ            | Էնալապրիլ դիտ 5մգ N30 (Ռեպլեկ ֆարմ)      | 8.4    |
| 2,101 | Էնօքսապարին enoxaparin լուծույթ ներարկման 20մգ/0,2մլ, 0,2մլ նախալցված ներարկիչ, տրամադրում  | նախալցված ներարկիչ | Կլեքսան սրվ. 2000ՍՄ 0.2մլ N2             | 2700   |
| 2,102 | Էնօքսապարին enoxaparin լուծույթ ներարկման 40մգ/0,4մլ, 0,4մլ նախալցված ներարկիչ, տրամադրում  | նախալցված ներարկիչ | Կլեքսան սրվ. 4000ՍՄ 0.4մլ N1             | 3660   |
| 2,103 | Թիամազոլ, Thiamazole դեղահատ 5մգ, տրամադրում  | դեղահատ            | Մերկազոլիլ դիտ 5մգ N100                  | 12     |
| 2,104 | Թիամին thiamine լուծույթ ներարկման 50մգ/մլ, 1մլ ամպուլա, տրամադրում   | ամպուլա            | Վիտ. B1 ամպ. 5% 1մլ N10                  | 24     |
| 2,105 | Թիմոլոլ timolol ակնակաթիլներ 5մգ/մլ, 5մլ սրվակ , տրամադրում   | սրվակ              | Թիմոլոլ աչքի կաթիլ 0.5% 5մլ (Ռում)       | 540    |
| 2,106 | Թիոպենտալ (թիոպենտալ նատրիում) thiopental (thiopental sodium), դեղափոշի լիոֆիլիզացված, ն/ե ներարկման լուծույթի, 500մգ սրվակ, տրամադրում   | սրվակ              | Թիոպենտալ , 500մգ սրվակ N1               | 1938   |
| 2,107 | Թիոպենտալ (թիոպենտալ նատրիում) thiopental (thiopental sodium), դեղափոշի լիոֆիլիզացված, ն/ե ներարկման լուծույթի, 1000մգ սրվակ, տրամադրում  | սրվակ              | Թիոպենտալ , 1000մգ սրվակ N1              | 2328   |
| 2,108 | Իբրուպրոֆեն ibuprofen դեղահատ թաղանթապատ 200մգ , տրամադրում   | դեղահատ            | Իբրուպրոֆեն Ակտիվ դիտ թ/պ 200մգ N30      | 21.6   |
| 2,109 | Իբրուպրոֆեն ibuprofen դեղահատ թաղանթապատ 400մգ, տրամադրում  | դեղահատ            | Իբրուպրոֆեն Ակտիվ դիտ թ/պ 400մգ N30      | 45     |
| 2,110 | Իբրուպրոֆեն ibuprofen լուծույթ ներքին ընդունման, 20մգ/մլ 100մլ, տրամադրում  | հատ                | Իբրուպրոֆեն Ակտիվ օշարակ 100մգ/5մլ 100մլ | 1260   |
| 2,111 | Լակտուլոզ lactulose լուծույթ ներքին ընդունման, 670մգ/մլ 100մլ, տրամադրում   | հատ                | Լաքսալակ օշարակ 100մլ                    | 1920   |
| 2,112 | Լակտուլոզ lactulose օշարակ 667մգ/մլ 200մլ, տրամադրում   | հատ                | Դյուֆալակ օշարակ 200մլ                   | 3200.4 |
| 2,113 | Լակտուլոզ lactulose օշարակ 667մգ/մլ 500մլ, տրամադրում   | հատ                | Դյուֆալակ օշարակ 500մլ                   | 5880   |
| 2,114 | Լակտուլոզ lactulose օշարակ 667մգ/մլ 1000մլ, տրամադրում  | հատ                | Դյուֆալակ օշարակ 1000մլ                  | 10320  |
| 2,115 | Լևամիզոլ levamisole դեղահատ 50մգ, տրամադրում  | դեղահատ            | Դեկարիս դիտ 50մգ N2                      | 480    |
| 2,116 | Լևամիզոլ levamisole դեղահատ 150մգ, տրամադրում   | դեղահատ            | Դեկարիս դիտ 150մգ N1                     | 960    |
| 2,117 | Կարբիդոպա, լեոդոպա carbidopa, levodopa, դեղահատ, 25մգ+250մգ, տրամադրում   | դեղահատ            | Նակոմ դիտ 250մգ/25մգ N10                 | 2400   |
| 2,118 | Լեոթիրոքսին levothyroxine դեղահատ 50մկգ, տրամադրում   | դեղահատ            | Էուտիրոքս դիտ 50մկգ N100                 | 15     |
| 2,119 | Լեոթիրոքսին դեղահատ levothyroxine 100մկգ, տրամադրում  | դեղահատ            | Էուտիրոքս դիտ 100մկգ N100                | 18     |
| 2,120 | Լեոնորգեստրել, Levonorgestrel դեղահատ 750 մկգ, տրամադրում   | դեղահատ            | Պոստինոր դիտ 0.75մգ N2                   | 3444   |
| 2,121 | Լեոֆլօքսացին, Levofloxacin դեղահատ 250մգ, տրամադրում  | դեղահատ            | Լեո դենեկ 250 մգ N10                     | 350.4  |

|       |   |           |  |          |
|-------|---|-----------|--|----------|
| 2,122 | Լևոֆլոքսացին Levofloxacin դեղահատ թաղանթապատ 500մգ , տրամադրում   | դեղահատ   | Լևոֆլոքսացին-Աստերիա դիտ 500մգ N10               | 504      |
| 2,123 | Լևոֆլոքսացին Levofloxacin լուծույթ կաթիլաներարկման 5մգ/մլ փաթեթ, 100մլ, տրամադրում  | փաթեթ     | Լևոֆլոքսացին Լ-թ 0.5% 100մլ (Ֆարմատեք)           | 4500     |
| 2,124 | Լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) lidocaine (lidocaine hydrochloride) լուծույթ ներարկման 20մգ/մլ, 2մլ ամպուլա, տրամադրում  | ամպուլա   | Լիդոկային ամպ. 2% 2մլ N10 (ԵՔԴՖ)                 | 36       |
| 2,125 | Լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) lidocaine (lidocaine hydrochloride) լուծույթ ներարկման 100մգ/մլ, 2մլ ամպուլա, տրամադրում | ամպուլա   | Լիդոկային ամպ. 10% 2մլ N10 (Ռուկր)               | 99.6     |
| 2,126 | Լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) lidocaine (lidocaine hydrochloride) լուծույթ ներարկման 10մգ/մլ, 20մլ սրվակ, տրամադրում   | սրվակ     | Լիդոկային-Լիկվո 1% 20մլ                          | 540      |
| 2,127 | Լոպերամիդ Loperamide դեղապատիճ 2մգ, տրամադրում  | դեղապատիճ | Լոպերիում դպճ 2մգ N10 (Ռեմեդիկա)                 | 31.992   |
| 2,128 | Լորազեպամ, Lorazepam դեղահատ 1մգ, տրամադրում  | դեղահատ   | ****Լորազեպամ դիտ 1մգ N24                        | 21       |
| 2,129 | Լորատադին, Loratadine դեղահատ 10մգ, տրամադրում  | դեղահատ   | Կլարիտին դիտ 10մգ N10                            | 264      |
| 2,130 | Լորատադին, Loratadine օշարակ 1մգ/մլ 60մլ, տրամադրում  | հատ       | Կլարիտին օշարակ 1մգ/մլ 60մլ                      | 2850     |
| 2,131 | Կալիումի քլորիդ, Potassium chloride լուծույթ կաթիլաներարկման 40մգ/մլ, 100մլ փաթեթ, տրամադրում                               | փաթեթ     | Կալիումի քլորիդ Լ-թ 4% 100մլ (Ֆարմատեք)          | 456      |
| 2,132 | Կալիումի քլորիդ, Potassium chloride լուծույթ կաթիլաներարկման 40մգ/մլ, 200մլ փաթեթ, տրամադրում                               | փաթեթ     | Կալիումի քլորիդ Լ-թ 4% 200մլ (Ֆարմատեք)          | 552      |
| 2,133 | Կալցիումի գլյուկոնատ, Calcium gluconate լուծույթ ներարկման 100մգ/մլ, 5մլ ամպուլա, տրամադրում                                | ամպուլա   | Կալցիումի գլյուկոնատ ամպ. 10% 5մլ N10 (Դարնիցա)  | 72       |
| 2,134 | Կալցիումի գլյուկոնատ, Calcium gluconate լուծույթ ներարկման 100մգ/մլ, 10մլ ամպուլա, տրամադրում                               | ամպուլա   | Կալցիումի գլյուկոնատ ամպ. 10% 10մլ N10 (Դարնիցա) | 132      |
| 2,135 | Կալցիումի գլյուկոնատ, Calcium gluconate դեղահատ 500մգ, , տրամադրում   | դեղահատ   | Կալցիումի գլյուկոնատ դիտ 500մգ N10 (Թաթրիմ.)     | 10.8     |
| 2,136 | Կանամիցին kanamycin դեղափոշի մ/մ ներարկման լուծույթի, 1000մգ սրվակ, տրամադրում  | սրվակ     | Կանամիցին սրվ. 1գ N1                             | 210      |
| 2,137 | Կարբամազեպին, carbamazepine դեղահատ 200մգ, տրամադրում   | դեղահատ   | Կարբամազեպին դիտ 200մգ N40/2այ/                  | 16.8     |
| 2,138 | Կարվեդիլոլ, carvedilol դեղահատ 6,25մգ, տրամադրում   | դեղահատ   | Կարվեդեքս դիտ 6.25մգ N30                         | 61.2     |
| 2,139 | Կարվեդիլոլ, carvedilol դեղահատ 12,5մգ, տրամադրում   | դեղահատ   | Կարվեդիլոլ դիտ 12,5մգ N40                        | 39.9996  |
| 2,140 | Կարվեդիլոլ, carvedilol դեղահատ 25մգ, տրամադրում   | դեղահատ   | Կարվեդիլոլ դիտ 25մգ N40                          | 52.5     |
| 2,141 | Կետոպրոֆեն ketoprofen, դեղապատիճ 50մգ, տրամադրում   | դեղապատիճ | Կետոնալ դպճ 50մգ N25                             | 51       |
| 2,142 | Կետոպրոֆեն, ketoprofen լուծույթ ներարկման 50մգ/մլ, 2մլ ամպուլա, տրամադրում  | ամպուլա   | Կետոնալ ամպ. 100մգ/2մլ N10                       | 240      |
| 2,143 | Կլարիթրոմիցին, clarithromycin դեղահատ թաղանթապատ 250 մգ, տրամադրում   | դեղահատ   | Կլարիտրոմիցին դիտ 250մգ N14                      | 192      |
| 2,144 | Կլարիթրոմիցին, clarithromycin դեղահատ թաղանթապատ կարգավորվող ձերբագատմամբ 500 մգ, տրամադրում                                | դեղահատ   | Կլացին-Աստերիա դիտ 500մգ N10                     | 384      |
| 2,145 | Կլոմիֆեն clomifene դեղահատ 50մգ, տրամադրում   | դեղահատ   | Կլոտիլքեգիտ դիտ 50մգ N10                         | 690      |
| 2,146 | Կլոպիդոգրել clopidogrel դեղահատ թաղանթապատ 75մգ, տրամադրում   | դեղահատ   | Կլոպիդոգրել Ակտիվ դիտ թ/պ 75մգ N30               | 165      |
| 2,147 | Կլոտրիմազոլ, clotrimazole նրբաքսուք հեշտոցային 10մգ/գ, 15գ պարկուճ, տրամադրում  | պարկուճ   | Կլոտրիմազոլ նրբաքսուք 1% 15գ(Արփինեդ)            | 270      |
| 2,148 | Կլոտրիմազոլ, clotrimazole դեղահատ հեշտոցային 100մգ, տրամադրում  | դեղահատ   | Կլոտրիմազոլ հեշտ. դիտ 100մգ N6                   | 132      |
| 2,149 | Կոլխիցին, colchicines դեղահատ 500մկգ, տրամադրում  | դեղահատ   | Կոլխիցին դիտ 500մկգ N100                         | 219.6    |
| 2,150 | Հեպարին (հեպարին նատրիում) heparin (heparin sodium), լուծույթ ներարկման, 5000ՄՄ/մլ, 5մլ սրվակ, տրամադրում                   | սրվակ     | Հեպարին սրվ. 5000ՄՄ/մլ 5մլ N1(Բեդար)             | 1820.004 |
| 2,151 | Հիդրոկորտիզոն hydrocortisone, քսուք 10մգ/գ, 15գ պարկուճ , տրամադրում  | պարկուճ   | Հիդրոկորտիզոն քսուք 1% 15գ(Արփինեդ)              | 319.2    |
| 2,152 | Հիդրոքլորթիազիդ hydrochlorothiazide, դեղահատ, 25մգ, տրամադրում  | դեղահատ   | Հիպոթիազիդ դիտ 25մգ N20                          | 54       |
| 2,153 | Մանիտոլ mannitol, լուծույթ կաթիլաներարկման, 100մգ/մլ, 400մլ փաթեթ, տրամադրում   | փաթեթ     | Մանի -տեկ 10% 400մլ                              | 1500     |

|       |   |         |   |          |
|-------|---|---------|---|----------|
| 2,154 | Մեբենդազոլ, mebendazole դեղահատ 100մգ, տրամադրում   | դեղահատ | Մեբենդազոլ դիտ 100մգ N10/Արփիմեդ/           | 54       |
| 2,155 | Մեբենդազոլ, mebendazole դեղահատ 500մգ, տրամադրում   | դեղահատ | Մեբենդազոլ դիտ 500մգ N1 /Արփիմեդ/           | 528      |
| 2,156 | Մեթոտրեքսատ, methotrexate դեղահատ 2.5մգ, տրամադրում   | դեղահատ | Մետոտրեքսատ դիտ 2.5մգ N20                   | 90       |
| 2,157 | Մետոկլոպրամիդ metoclopramide դեղահատ 10մգ, տրամադրում   | դեղահատ | Ցեռուկալ դիտ 10մգ N50                       | 25.2     |
| 2,158 | Մետոկլոպրամիդ metoclopramide լուծույթ ներարկման 5մգ/մլ, 2մլ ամպուլա, տրամադրում   | ամպուլա | Ցեռուկալ ամպ. 10մգ/2մլ N10                  | 236.004  |
| 2,159 | Մետոպրոլոլ metoprolol դեղահատ 25մգ, տրամադրում  | դեղահատ | Մետոպրոլոլի տրամադրում Էգիլոլ դիտ 25մգ N60  | 24       |
| 2,160 | Մետոպրոլոլ metoprolol դեղահատ 50մգ, տրամադրում  | դեղահատ | Էգիլոլ դիտ 50մգ N60                         | 31.2     |
| 2,161 | Մետոպրոլոլ metoprolol դեղահատ 100մգ, տրամադրում   | դեղահատ | Էգիլոլ դիտ 100մգ N60                        | 42       |
| 2,162 | Մետրոնիդազոլ, metronidazole դեղահատ 250մգ, տրամադրում   | դեղահատ | Մետրոնիդազոլ դիտ 250մգ N10 (Բեյ)            | 8.4      |
| 2,163 | Մետրոնիդազոլ, metronidazole դեղահատ թաղանթապատ 500մգ, տրամադրում  | դեղահատ | Մետրոնիդազոլ դիտ 500մգ N20(Օգոն)            | 38.4     |
| 2,164 | Մետրոնիդազոլ metronidazole, մոմիկներ հեշտոցային, 500մգ, տրամադրում  | մոմիկ   | Ֆլազոն հեշտ. մոմիկ 500մգ N10                | 99.996   |
| 2,165 | Մետրոնիդազոլ, metronidazole լուծույթ ն/ե կաթիլաներարկման 5մգ/մլ, 100մլ շշիկ, տրամադրում   | շշիկ    | Մետրոգիլ 1-թ 5մգ/մլ 100մլ                   | 399.996  |
| 2,166 | Մետրոնիդազոլ, metronidazole դեղակախույթ ներքին ընդունման 25մգ/մլ, 100մլ, տրամադրում   | շշիկ    | Ֆլազոն կախույթ 125մգ/5մլ 100մլ              | 1599.996 |
| 2,167 | Մետֆորմին metformin դեղահատ թաղանթապատ 500մգ, տրամադրում  | դեղահատ | Մետֆորմին դիտ թ/պ 500մգ N30                 | 28.8     |
| 2,168 | Մերոպենեմ meropenem դեղափոշի ն/ե ներարկման լուծույթի 500մգ սրվակ տրամադրում   | սրվակ   | Մերոպենեմ-Աստերիա սրվ. ն/ե 500մգ N1         | 9480     |
| 2,169 | Միզոպրոստոլ misoprostol դեղահատ 200մգ, տրամադրում   | դեղահատ | Սայտոսեն դիտ 200մգ N60                      | 229.2    |
| 2,170 | Միկոնազոլ miconazole, նրբաքսուք արտաքին կիրառման 20մգ/գ, 15գ պարկուճ, տրամադրում  | պարկուճ | Միկոնազոլ նրբաքսուք 2% 15գ                  | 390      |
| 2,171 | Միֆեպրիստոն mifepristone, դեղահատ 200մգ, տրամադրում   | դեղահատ | Միրոպրիստոն դիտ 200մգ N3                    | 6840     |
| 2,172 | Մոքսիֆլոքսացին moxifloxacin, դեղահատ թաղանթապատ 400մգ, տրամադրում   | դեղահատ | Մոքսիբալ դիտ 400մգ N5                       | 1056     |
| 2,173 | Նատրիումի բիկարբոնատ, Sodium bicarbonate, լուծույթ կաթիլաներարկման 84մգ/մլ, 20մլ սրվակ, տրամադրում  | սրվակ   | Նատրիումի բիկարբոնատ 1-թ 8.4% 20մլ N10      | 1080     |
| 2,174 | Նատրիումի թիոսուլֆատ, Sodium Thiosulfate, լուծույթ ներարկման, 300մգ/մլ 5մլ ամպուլա, տրամադրում  | ամպուլա | Նատրիումի թիոսուլֆատ ամպ. 30% 5մլ N10       | 66       |
| 2,175 | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ ներարկման 9մգ/մլ, 5մլ ամպուլա, տրամադրում   | ամպուլա | Նատրիումի քլորիդ ամպ. 0.9% 5մլ N10 (ԵՔՂԵ)   | 44.4     |
| 2,176 | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ ներարկման 9մգ/մլ, 10մլ ամպուլա, տրամադրում  | ամպուլա | Նատրիումի քլորիդ ամպ. 0,9% 10մլ N10 (Ուկր.) | 81.6     |
| 2,177 | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ ներարկման 9մգ/մլ, 50մլ ամպուլա, տրամադրում  | ամպուլա | Նատրիումի քլորիդ 1-թ 0.9% 50մլ (Ֆարմատեք)   | 309.9996 |
| 2,178 | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 100մլ փաթեթ, տրամադրում   | փաթեթ   | Նատրիումի քլորիդ 1-թ 0.9% 100մլ (Ֆարմատեք)  | 360      |
| 2,179 | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 200մլ փաթեթ, տրամադրում   | փաթեթ   | Նատրիումի քլորիդ 1-թ 0.9% 200մլ (Ֆարմատեք)  | 360      |
| 2,180 | Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 250մլ փաթեթ, տրամադրում   | փաթեթ   | Նատրիումի քլորիդ 1-թ 0.9% 250մլ (Ֆարմատեք)  | 379.9992 |
